

ԳՐԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՁԵՌԱԳՐԵՐԸ.

(Շարունակութիւն)

Թ. 25.

Ա Ս Տ Ո Ւ Վ Յ Ա Շ Ո Ւ Ն Ն .

Թւկ. գրչթ. ՌԾԹ (—1059: 1610) գրիչ՝ «Յակոբ սգաւոր», գրութ. տեղ՝ Գաղատիա (Անկիւրիտ).

Սկզբից պահպանում է մինչև Ծննդ. ԼԵ, 18.—Շնացած կնոջ պատմութիւնը դրած է Ղուկ. աւ. և վերջում. «Իբրք կնոջն շնացելոյ», էջ՝ 802ա.

Յիշատակարանք.

728ր «Աւարաեցաւ հին կտակարան. և ձեռն թերաւարժ և յոգնամեղ անպիտան սոսկանուն յակոբ սգաւորին, արթուն անուամբ կոչեցեալ և դ՞ ծովք և քուն մահու ընկլուղեալ: և ըստ համարոյ յաբեթաղին տօմարի, ձեռն, կնդոսի, երբորդ, ընդիքտիոնէ . . միոյ նոնոսի, յամսեանն հայոց, քաղոցի, ոգոնիմի, երբայեցոց ամսոյն. Սգարի առաջաե՞րդ բեսէքիստոնի և միոյ զիմպիաթի». հառմեցոց, յամսոյն, փեարփարի, չորրորդ նահանջի: Այլ աւելի միոյ նոնոսի, աւուրն շաբաթի. Ոհ աղաչեմ զդրող սորին մոխրաթաւալ դիմօք զդասս լուսերամից աշխատասէր բանասիրաց, յիշեցէք յաղօթս ձեր, և դուք յիշեալ լիջիք առ տէր:»

729ա «Ես ագուլեցի փուրդուց ամիւր սարկավագի որդի Ալէքսանըս առի սուրբ ա՞ ծաշունչս և գիւղաքաղաքն:—ագուլիս թվ. Ռ՞ձԸ: Հոգամբերի ամսուն էկի ըսպհանէս փորդունց Ամիւր սարկավագի որդի: Ալէքսանս ծառայ էմ միշտ Մարիամ ս՞ք կոյս ա՞ ծծածնին. ամէն և թագաւորութեան այսմ թվի պարսից շահ սէլէմանին, երկրորդ շահաբասի որդուն:»

953ր «Փառք ամենասուրբ երրորդութեանն և միասնական ա^մ ծութեանն հաւր և որդւոյ և հոգւոյ սրբոյ, յամենայն դոյից այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից ամէն Յամի հաղարերրորդի յիսուս և իննեւրորդի հայոց թուականութեանս. շարագրեցաւ ա^մ ծաբան մատեանս որ կոչի ա^մ ծայշունչ հին և նոր կտակարան բովանդակ ձեռամբ յոգնամեղ և անվարժ յակոբ սգաւորի. բերկրումն և ի մխիթարութիւն իր անձին իւրոյ. և գրեցաւ սայ ի դադատիեայ, որ է որջորջեն յանկիւրիս. ընդ հովանեաւ սրբոյ ա^մ ծածնայ ի տիրածին կուսին տաճարիս ի փառս փրկչին. և է բերդին մէջ. Զայսու ժամանակաւ սպառեցան և կորեան ապրստամբք ճէլէլիք ամենայն յերկիր խաղաղութիւն դարձաւ. և ա^մ ծողորմեցաւ առ մեզ. ոչ ըստ մեղաց մերոց արար մեզ տ^մր. դոհութիւն յա^մյ. Այլ և փրկեաց զմեզ ի ձեռաց խստից և ապրստամբողաց. Այլ և զարուստ ամենայն դրողոց արթուն անուամբ կոչեցեալ. և գործովք ի քուն մահու ընկուղեալ մաղթեցէք վասն իմ հանդիպողքդ առ տ^մր և յիշեցէք ի բարին դի և դուք յիշեալ լիցիք յարքայութեանն ա^մյ ընդ յաջակողմեան դաւանողին և հայցողին ամէն. Արդ աղաչեմ և աղերսանաւք խնդրեմ ի ձեզ. որք հանդիպիք ս^մք տառիս յիշեսցիք զծնողս իմ զհոգւոր և զմարմնաւոր և զեղբարքս իմ. և զամենայն աղբայինս իմ զկենդանիս և զնընջեցեալսն. և որով կամաւք յիշէք առ տ^մր. նովին չսփով յիշիք ի կամեցողէն բարեաց *քէ ամէն. բայց գծեցաւ այդ ի թ^մվկիս հայոց. Ռ^ժԹ^ժ յամսեանն նաւասարդի Ժ^դ երբայեցւոյ յամսոյն, մեհրշուանն Ժ^քը, հռոմայեցոյ յամսոյն նոյեմբերի, *Դ յաւրն շարաթ ժամն քսան, եղև յաւարտումն սուրբ գրոցս: Զեռաթշուառ և զփցնադիծ դրիչս յակովբ սգաւոր աղաչեմ յիշելով հայր սրատուական. դի և դուք յիշեալ լիցիս ի *տնէ յ^մէ ք^մսէ ամէն. Հայր մեր որ յերկինս, ասել մի ձանձրանայք վերժանողքդ յիշատակարանիս»:

(Ստրեւ մի աւելի ուժ ժամանակի յիշատակարան մկրտով կտրած վերցրած է.)

954ր «Թվին Ռ^ժԺԷ ապրիլի, մէկումն ազուլիս. ես ազուլեցի, քուրդունց մղդսի աղամիւրի, որդի զաքարիայ այս ս^մք ա^մ ծաշունչս պահեցի *զ ամիս վասն կարգաւոր ով որ հանդիբիք, զմեղաւորս յիշեցէք ի ք^մս և դուք յիշեալ լիջիք ի ք^մս.»

— 26. —

— 26. —

46^ր Առաւելք սողումովն: Զատացող սորա զկարասկեւ
 Լըօնօր և զծնողս նորա և զննջեցեալսն ն^ք, և զիս զմեղաւ
 պարտ ստեփ^ր զծողս և զծնողսն իմ և զննջեցեալսն մեր առ
 հասարակ յիշեցէք ի տ^ք ա^ք ծ, և ա^ք ծ զձեզ և զձեր ննջե-
 ցեալսն յիշէ ամէն:

62^ա Ժողովն, Զատացող սորա զկարասկեւ Լըօն^ր և
 զծնողսն իւր յիշեցէք ի ս^ք յազաւթս ձեր, և զիս զանպի-
 տանս ի մանկուէս եկեղեցոյ զմեղուցեալ ստեփանոս գրիչ
 յիշել ի ք^ս ա^ք ծ աղաչեմ, և ողորմածն ա^ք ծ ձեզ և մեղ
 ողորմի, ամէն:

71^ր «Եիմ բազում մեղացն և անթիւ չարեացն: ամբից
 և ոչ անձրեից և զգիր գրոցս ջնջեց այն կաթից»:

100^ր Փառք ս^ք Երրորդութեն և միա^ք ծութեն հաւր
 և որդւոյ և հոգւոյն սրբոյ, այժմ և միշտ և յաւիտեանս
 յաւիտենից ամէն:

Ք^ս ա^ք ծ յոյսն մեր արարիչն երկնի և երկրի, լուսա-
 ւորէ զհոգի երջանիկ և պատուական Լըօնաւորի կարասկեւի
 ստացողի գրոցս և վարձս և ողորմութ^ք ի շնորհեացէ նմա, և
 զհայր իւր զաքարիա և զմայր իւր թամթա, ազգաւք և զար-
 մաւք, յարութ^ք ե կենաց և միւսանդամ գալստեաանն և յա-
 ւիտենից կենացն արժանի արասցէ տ^ք ա^ք ծ մեր: ամէն: և
 զմեղաւոր գրիչ և զհայր իւր կիրակոս և զմայր իւր մելէք ք^ս
 ա^ք ծ փրկիչն մեր արժանի արասցէ ա^ք ծաին լուսոյն և տե-
 սոյն իւրոյ զն^ք և մեղաց և յանցանաց նո^ք թողութ^ք ի շնոր-
 հեացէ, ամէն:

(գրուած և ջնջուած) զմեղուցեալ վարդան և զծնողսն իւր
 յիշման արժանի առնէք որ գրոցս աւգնական եղև յղորդել:

101^ա «Բարսեղ մկրտիչ կարայսկեւ ով որ յիշէ յիշեալ
 լինի յԱծյ:

144^ր տ^ք ա^ք ծ հայրն երկնաւոր ողորմութ^ք ի և մեղաց
 թողութ^ք ի շնորհեացէ, ստացողի գրոցս կարասկեւ Լըօնա-

ւորի և ծնողաց իւրոց և փրկեացէ յաւիտենից տանջանացն և արքայութեան և հանդստեան արժանի արասցէ ամէն: և մեղաւոր դրչի ստեփանոսի և ծեր մօրն իմ մեղէքի որ ի գեղէն ի վանքս զթացանն բերէր մեղ. ա՛ք ա՛ծ ամենակալ. ողորմութի և մեղաց թողութի շնորհեացէ նմա:

282թ. Փառք համապատիւ և միասնական ուր երբորդութեան և միա՞ծութեանն հաւք անեղի, և որդւոյն միածնի, և հոգւոյն սրբոյ պարգեռի. յամենայն դոյից արարածոց իւրոց, յերկնաւորաց անմահական դասոց, և ի ստորեւ կացելոցն մարդկան բանական մահկանացուացս, ի կենդանեաց և յանշնչականաց հաստելոց: Վայելչական դոհարանութեաւրհնութի և իշխանութի յայժմու յաւիտենիս և յապագա մշտնջենաւորին և յանկէտ յաւիտէնից յաւիտեանս ամէն:

Գրեցի և հաստատեալ կառուցի աւթանդակութի առեալ ի վերին զաւրութենէն, ի դէմս քարտենի ըստ իմումս կարութե և զբանս աստուածայնոյն սողոմովնի ա՛ծաին հոգով առ լցեալ, ընդ որում և դատուս առածից երկոտասան սրբոց մարգարէից որոց անուանքն գրեալ է ի զաւրութի և կենաց անեղծ պայմանաւ. ընդ նոսին և յովքա արդարոյ, և դանիէլի մարգարէի. ընդ նոսին շարաարեալ զաւրէն մաքրութեան ոսկոյ ընդ պայծառութի ահանց պատուականաց, կամ և հրաշադարդ տեսութի նման արեգական. ընդ երկոտասան աստեղաց կենդանակերպաց յերկինս յեռելոց հրամանաւ անեղին ա՛յ ո՛ւր նոքա զերկնաինն լուսաւորեն զվայրըս, նոյնպէս և սոքա զստորեկացելոց անձինս ի հրահանդս կրթութե մանկանց նոր սինի, և ի դարդ պայծառութե կաթուղիկէ ա՛ք եկեղեցոյ, ի թուականութե հայկազեան տոհմիս տոմարիս, Պ: երբորդի. Ն. երբորդի: Նս անպիտանս ի մանկունս եկեղեցւոյ ստեփանու անարժան զկրաւնաւոր, գրեցի ըստ իմում կարութե և կարգեցի ի դէմս քարտենի ի յանապատիս որ հոչի սրբաւոր վանք ընդ հովանեաւ ա՛ք ա՛ծածածնիս որ է հանդէպ վարագայ ա՛ծաբնակ լերինն: ի խնդրոյ երջանիկ առաքինասէր և պատուական կրօնաւորի կարապետի յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց. հաւրն իւր դաքարիաի և մայրն իւր թամթայի և հարադատ եղբաւրն իւր միրտչի լինել նմա յայսմ աշխարհիս առողջ կենալք և յերկար ժամանակաւք ի վայելումն դեռաբոյս և նորաբողբոջ վարդապետ և լուսատիպ մանկան եղբաւրորդւոյ իւրոց յովանիսի, բազում ժամանակաւք, և զքեռն իւր զշամշախարհուն և զկրսեր եղբայրն զհայրապետ, գրեցէ զնոսա ք՞

ա՞ծ ի գիրն կենդանեաց, ընդ նոսին և աղգատոհմին իւրոյ
 ամիրըլուսին և թուամին և քեռն իւրեանց մարթայի և բարի
 զաւակաց նոցա և փոխելոյն ի ք՞ս զաքարիայի և աւանի և
 ա՞մ արեան մերձաւորաց իւրոց, ընդ նմին և ինձ մեղաւոր
 դրչի ստեփանոսի և ծնողաց իմոց, հաւրն իմ կիրակոսի և
 մաւրն իմ մելիքի և ննջեցելոց մերոց, ք՞ս ա՞ծ ողորմութ՞ ի
 շնորհեացէ ամէն: Արդ հայցեմք ի ճաշակողացդ յայսմ յոգնա-
 համեան սեղանոյ որք ի պէտս կրթութ՞ ե զսոյն ընդունիք
 յիշատակի արժանի առնել աղաւթիւք առ ք՞ս ա՞ծ յոյսն
 ամենեցուն զկարապետ կրօնաւոր և զծնողսն իւր, զհայրն իւր
 զաքարիա և զմայրն իւր զթամթայ, և զա՞մ աղգատոհմն իւր
 և զննջեցեալս նորա և զեղբայրն իւր զմկրտիչ և զամիրըլոյս և
 զթուամայ և զքեռն իւրեանց և զբարի զաւակս նոցա, և զփո-
 խեալն ի ք՞ս զաքարիայ և զաւան երկնից արքայութ՞ են ար-
 ժանի արասցէ զնոսա ք՞ս ա՞ծ: Եւ արդ կրկին աղաչեմ զձեզ
 ով սուրբ ընթերցողք յիշեցէք ի ք՞ս ա՞ծ, զկարապետ կրօնոր
 ջերմ սիրով և բարի մտաւք փափաքող եղև այսմ տառի և
 զքեռն իւր զշամշախաթուն և զկրօն եղբայրն զհայրապետ
 և զա՞մ արեան մերձաւորս նորա զաքարիայ և զամուսինն նորա
 զսըթլալ որ փոխեալ են ի ք՞ս, և զբարի զաւակս նոցա զգո-
 հար դաշ և զամուսինն նորա զղուէն և զթանկխաթուն, և
 զկրօն եղբայրն զվարդան և զամուսինն նորա զմելէք և զա-
 ւակս նորա զփոխեալն ի ք՞ս զթաւաքալն և զյովաննէս երկար
 կենաւք և բարի գործովք կացցէ յաշխարհիս, և զքեռս գո-
 հարդաշին զբուլղան զխոնդղէն և զփոխեալն ի ք՞ս զսուլ-
 տան զնուղղայն: ընդ նոսին և զամիրըլուսն և զամուսինն իւր
 զմերղէն զփոխեալն ի ք՞ս և, զխնդուն: և որ կենդանիքն զաւ-
 դիր և զաւետիս ամիր սարգիս, զթումէն, և զամուսինն նորա
 զթանկխաթուն և զաւակս նոցա զատոմ և զգիշուկ զուարիկ:
 ընդ նոսին և զմեղօոր դրիչ զստեփա՞ և զիմօն, ով ս՞բ ըն-
 թերցողք յորժամ ընթեռնուք զս՞բ տառս, յիշեցէք ի ք՞ս
 ա՞ծ մեր զկարապետ կրօնօր և զիւրսն ա՞մ և զպատուական
 կրօնօր զկիրակոս և զծնողս իւր որ զաւրինակն շնորհեաց ք՞ս
 ա՞ծ հանգիստ և ողորմութ՞ ի շնորհեացէ նոցա, զերջանիկ և
 զսրբասէր կրանաւորն զհայրապետն և զերախտաւորն մեր որ
 կամակից եղև տառիս, երախտաւորն ք՞ս կենացն յաւիտե-
 նից և արքայութե՞ն արժանի արասցէ զնա: Եւ արդ յերեսս
 անկեալ աղաչեմ զձեզ ով որ հանգիպիք այսմ ա՞ծաշունչ
 գրոցս բոլոր սրտիւ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր զկա-
 րապետ կրօն՞ և զերախտօր գրոցս և զախմար գրիչ, և ու-
 զիղ մտաւք ա՞ծ ողորմի ասացէք: ք՞ս ա՞ծ, որ առասն է

խառնուք յիշողացդ և յիշեցելոցս և ամենեցուն հանդիստ և ողորմութ՝ ի շնորհեսցէ ամէն:

285թ Զմարտիբոս և զբարսեղ և զԾնողս իւրեանց. յիշեցէք ի ք՝ս. աղաչեմ: զթանքմելէք և զաւակ նորա զստեփանոս յիշեցէք ի տ՝ր ա՝ծ: Խնամաւքն ա՞յ կացցէ յաշխ՝ ով եղբարք, աւրինակն երկաթադիր էր: հինգ հարիւր տարոյ գրած և շատ տեղ փշրած աղերսեմ շնորհել մեզ, բաւէ: Դանիէլի և յովբա: Բ. «գրոցս Զայս դիրքս ի բարեբողոյ գերութ՝ ին աղատեցի. ի տաճկի ձեռացն. ով որ կարդայ ա՞ծ ողորմի ասացէք խելանշի աղային, և նանա խաթունին. ամէն:

թ. 27.

ՅԱՅՍՄԱԻՈՒՐԲ.

Թղթ. բլրդ. թւկ. գրչթ. ?

Յիշատակարան.

4թ «Բարեխօսութ՝ք սրբոցս որ յայսմ աւուր յիշատակեցան. ք՝ս ա՞ծ ողորմեա ստացողի գրոցս զարթուխ մահդասին և խաչատուր վճռապետ և ա՞մ մեր»:

Նան. — Ձեռագիրս այսօրինակ մանր յիշատակարաններ ունի ամէն մի զվսի վերջում, որոնցից զրի են առնուած նրանք միայն. որոնք մը եւ է զանազանութիւն ունին արդէն զրի առնուածներից.

5թ «Բարեխօսութ՝ք ք՝ս ա՞ծ ողորմի ստացողի գրոցս զարթուխ մահդասին և խաչատուր վարդապետին, և գրչիս:»

6թ «Յիշատակ ն՞ց ա՞հնութ՝ք եղիցի և աղաւթք ն՞ց բարեխօս լիցի վճռապետ աշխարհի, մանաւանդ ստացողի գրոցս զարթուխ մահդասին և խաչատուր վարդապետին և ա՞մ արե՛».

12թ «Մայր լուսոյ ա՞ծածին բարեխօսեա առ որդին քո միածին վճռապետ աշխարհի մահդասին արթուխին, և խաչատուր վճռապետին և ծնաւդաց նոցին, և ինձ մեղաւոր գրչիս ամէն:»

14ա «Որոց աղաւթիւք սոցա ք՝ս ա՞ծ ստացողի գրոցս մահդասի արթուխին և խաչատուր վարդապետին և ա՞մ արեան մերձաւ՛»:

16ա «Սոցին բարեխօսութ՝ք ք՝ս ա՞ծ կեցո զխաչատուր վարդապետին, և գրչիս:»

17^ա «Ստացաւդ դրոցս խաչատուր վարդապետին և զծնաւդսն իւր:»

18^ա «Սոցին աղաչանաւք շնորհեա մեզ ք^ս և ստացողի սորա խաչատուր վարդապետին զերկնից նաւահանդիստն յաւիտե'':»

29^ա «Բարեխաւսեա վասն ստացողի դրոցս, խաչատուր վարդապետին, և ինձ մեղաւոր դժողիս:»

29^բ «Որ ողորմի Գրիստոս ա^ւ ծ ստացողի դրոցս խաչատուր վարդապետին:»

33^ա «Որոց աղօթիւքն ողորմի ք^ս ա^ւ ծ ստացողի դրոցս, խաչատուր վարդապետին, և անպիտան գրչի:»

59^բ «Ողորմեա ք^ս ա^ւ ծ ա^ւ մ հաւատացելոց: Մանաւանդ խաչատուր վարդապետին և ծնաւդացն իւր, և զա^ւ մ արեան մերձաւորսն, և մեղապարտ գրչի յակոբին կարդացողաց և լսողաց:»

105^բ «Որոց աղօթիւքն ողորմի ք^ս ա^ւ ծ ստացողի դրոցս խաչատուր վարդապետին և ծնաւդացն իւր զհայրն զկարապետն և զմայրն իւր զսառայն և զեղբայրսն իւր հանգուցեալ զմիրիջանն, և զվարդանն, և զկենդանին զաղաջանն. և զքոյրն իւր գուհարն, և զամենայն արեան մերձաւորսն եղիցի յիշատակ նոցա մառին: Եւ զարձեալ յիշեցէք և զհոգեւոր սրդիսն իւր և զաշակերտսն իւր զտէր առաքել, և զտէր յովաննէս վարդապետսն, և թարմատար գրչի զյակոբն:»

205^ա «Ողորմի ք^ս ա^ւ ծ ստացողի դրոցս խաչատուր վարդապետին և ծնողացն իւր և ինձ անպիտան յակոբ դժողի:»

392^ա «Ք^ս ա^ւ ծ մեր որ այսօր պայծառ և արժիաւիայլ տեսլեամբ յայտնեցեր զխաչ քո յերկրորդ յայանութեանն, և ի քուժ զալստեանն արժանացոյ զա^ւ մ հաւատացեալ քրիստոնեայքս: Մանաւանդ ստացող դրոցս խաչատուր վարդապետ, և զծնողսն իւր և զաշակերտսն իւր զտէր առաքել, և զտէր յովաննէս վարդապետսն, և ա^ւ մ արու մերձ'': Եւ զիս անարժան և մեղաւոր դժողս զյակոբ և զծնողսն իմ, և ասացէք ի խորոց սրտէ թէ ա^ւ ր ա^ւ ծ ողորմեա ն^ւ ց և գրեա ի գիրն կենաց, և ք^ս ձեզ և մեզ ողորմեսցի և նմա փառք յաւիտեանս ամէն:»

508^ա «Յիշատակարան դրոցս. Փառք ամենաս^ք ամենազօր

509^ա Ըստ այսմն յարացուցի, ամենազովելի երջանիկ ընտրեալ պատուելի և ա^ւ ծահաճոյ ա^ւ մ զովութեանց ար-

ժանաւորեալն ս^ք և քաջ հռետորն և արեւաջան բարունա-
պետն սիմէոն յոյժ սիրելի դաւեալ ա^քմ սրբոց ի տօնախմբու-
թիւն անյատարադ առանց ձանձրանալոյ մի քստ միօջէ կատա-
րելով զտօն սրբոց նահապետաց, նախահարց, սրբոց մարգա-
րէիցն, մինչև ի խոնարհելն որդւոյն ա^յ, և իջանել յերկնից կա-
մաւ հաւը և ս^ք հոգւոյն դալ քնակիլ յամենաւերհնեալ ս^ք
կոյտն մարիամ աւետիքն գարրիէլի: Եւ զս^ք ծնունդն քրիս-
տոսի, և սրբոց առաքելոցն, սրբոց մարտիրոսացն, սրբոց հայ-
րապետացն, սրբոց ճգնաւորացն: Եւ սրբոց թագաւորացն և
կուսանացն: Ատարեալ և քնտիր օրինակ առաջին վարդա-
պետքն փարթամացուցեալ էին նորահրաշ պատմութեամբք
սրբոց, և զարդարելով զամենայն տօնս ա^քունական զաւե-
տեաց, զծննդեան, զտեառնքնդառաջին, զայլակերպութեան,
զա^ք ծածնին, զխաչին, զխաչդիւաին: Զոր տէր Սաեփաննոս
որդի մեծափառ իշխանին իւանէի որոտնեցոյ եբեր ի Սքոյ
յա^ք ծաքնակ ուխտն Եւստաթէի ս^ք առաքելոյն: Եւ մեծ վար-
դապետն մեր քաջ Եկեսիատեն հզօր բազում աշխատու-
թեամբ և երթեկութեամբ բերել ետ ի դաւառս այրարա-
տեան, և մեծաւ փափագ յաւթարութեամբ դրել ետ և հրա-
ման ետ ամենեցուն նոյնպէս գրել: Ի խնդրոյ և յարդեանց
երիցս երանեալ ժրաջան տեառն մշակի, և ա^ք ծաքան բա-
րունոյ տեառն խաչատրոյ դողթնեաց գէտ և տեսուչ վերա-
կոչեցելոյ, որ է աշակերտ մեծին մովսիսի վերադիտողին հա-
յոց: Յորում ժամանակի կրկին լուսաւորեցան հայք: Քանզի
նա բազում վշտաց և նեղութեանց համբերել, կրկին նորո-
դեաց զմայրն մեր, զաթոռ սրբոյն գրիգորի, և վերստին նո-
րոգեաց զեկեղեցի հայաստանեաց, կարգեաց անապատս հինգս՝
ի մէջ մերս աղգի սիւն և հաստատուն պարիսպ մերս աղգի,
և յետ այսքան իմն ջանից փոխեցաւ առ տէր, և զկնի նորին
յաջորդեաց զաթոռն իւր սրբամեծար և երիցադոյն աշակերտն
իւր՝ տէր փիլիպպոս կաթողիկոսն, որ լուսադարդեալ երեւիւր
ի մէջ եղբարց իւրոց վարդապետաց, որպէս յաստեղս տրեգակն,
որ և նա դերագոյն դաւաւ քան զհայրն իւր քստ հոգոյ և քստ
մարմնոյ տնօրէնութեամբ: Իսկ մակադրեալ սրբազան բարու-
նին Խաչատուր հրամանաւ մովսիսին մեծի եղեալ եղև յա-
թոռ սրբոյն Թումայ, որ յերկրին գողթնեաց, ի հռչակաւոր
դեւղաքաղաքն ագուլիս, և սա եկեալ գտաւ զի քնաւ ոչ գոյր
քստ պատշաճի իմն շինութիւն, այլ թէ օրինակ և նշան ա-
ւերման, վասն որոյ յոգնակի իմն ջան դրեալ և յոլովս աշ-
խատեալ վերստին նորոգեաց զթումա առաքեալ անուանեալ
աթոռս, զոր և մակերևոյթն իսկ ցուցանէ. քանզի քնաւն

նորա ի ձեռն սորա նորոգեալ շինեցաւ, եթէ եկեղեցին և թէ պարխսպն, և եթէ ի միջի լեալ շինութիւնսն, և դանօթն և դարգն եկեղեցւոյն ընաւն իւրապարտ արար, բայց ոչ որպէս դառաջին կամ կրկնապատիկ, այլ սակաւ ինչ նշոյլ գրոց երեւի մնացեալ ի նախնեաց. իսկ դայլ անթմեւի անօթս՝ սա ստացաւ յիշատակ յիւրում անձին. քանզի եթէ խորհել կամիս և իմանալ, ի ներ շինութեանց անօթն և փա (շարունակութիւնը պակասում է)։

շարունակելի

Մ. Վ. Մախարիան

ՀԱՅՐԵՆԻ ԵԶԵՐՔՆ ԻՐՐԵԻ ԱՊԸՍՏՆՆ

ՅՈՂՀԱՆՆԷՍ ԹՈՒՄԱՆԵԱՆ

(Շարունակութիւն)

Շարունակենք Յովհ. Թումանեանի վեցեակի միւս տողերի մեկնութիւնը, վերլուծումը.

Այս ցած կեանքից հեծ ու անքել

Թռչել երկինք—վերե՛ւ, վերե՛ւ,

Յաւեր, հոգսեր ողջ մոռանալ . . .

Այստեղ արտայայտուած ապրումները նիւթ են ծառայել մեր մի «գեղարուեստական քննադատի» համար քարեր շարտելու մեր բանաստեղծի վրայ. նա (Լէօն) հետևում է «գեղարուեստը կեանքի համար» սկզբունքին և այնպէս է հասկացել, թէ Յովհ. Թումանեանը «բառեր, բառեր, բառեր» շարելով՝ կամենում է մարդկանց կտրել կեանքից և դաղթեցնել դէպի Պառնաս, որն ըստ այդ քննադատի շատ վատ բնակավայր է, որովհետև այնտեղ պաշտում է «գեղարուեստը գեղարուեստի համար» անիծեալ սկզբունքը . . .

Բայց դա թիւրիմացութիւն է ճիշտ այնպէս, ինչպէս այդ մարդու բոլոր կարծիքները, որ քարոզել է գեղարուեստի մասին և մօլորեցրել բանից անտեղեակներին։

Եթէ նա դտարիւն հրապարակախօս չլինէր, իրազեկ լինէր գեղարուեստի թէօրիային, ծանօթանար հիմնովին տաղանդի և գեղեցկի հոգեբանութեան հետ և առհասարակ հոգեբանական դիտութիւնից բացարձակապէս կտրուած չլինէր—հաղիւ թէ նման թիւրիմացութիւններ ծագէին նրա ուղեղի մէջ։

Բայց ինչ որ եղել է, եղել է անվերադարձ կերպով. Ու մենք մտադրութիւն չունինք այդ քննադատի սխալների հերքումով զբաղուել, որովհետև նրան նոր բան հասկացնելը վեր է մեր ոյժերից,